

### 5.3. 2009թ. օգոստոս ամսվա հիդրոտեղեկությունների վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոտեղեկությունների և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, օգոստոսին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից ցածր 1.5-3 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-2 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ 1.5-2.5 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ 1.5-3.5 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում կազմել է +29 +31°C, Սյունիքի հովիտներում՝ +27 +29°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +22 +27°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +20 +23°C, լեռնային շրջաններում՝ +18 +23°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է օգոստոսի 5-8-ին: Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում գրանցվել է +32 +36°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +25 +30°C (Բագրատաշեն գյուղում՝ +33°C), Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +24 +29°C, լեռնային շրջաններում՝ +21 +26°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է +5+10°C (ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ +11°C), ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +8 +12°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +11 +16°C, Արարատյան դաշտավայրում՝ +15 +17°C, Սյունիքի հովիտներում՝ +17 +20°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է օգոստոսի 23-25-ին: Լեռնային շրջաններում գրանցվել է +2 +7°C (ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ) և Ծաղկահովիտ գյուղում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 0°C, գետնի մակերևույթին՝ -2°C), ՀՀ Լոռու մարզում՝ +3 +8°C (ք.Տաշիրում՝ 0°C), ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +6 +11°C (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ +4°C), Արարատյան դաշտավայրում՝ +9 +14°C, Սյունիքի հովիտներում՝ +12 +17°C:

Առանձին օրերին գրանցված նվազագույն ջերմաստիճանը գերազանցել է այդ օրերին երբևէ դիտված ամենացածր ջերմաստիճանները:

Օգոստոս ամսվա ընթացքում հանրապետության տարածաշրջանների մեծ մասում տեղումների քանակը եղել է նորմայից բարձր, Սյունիքի հովիտներում՝ ցածր: Արարատյան դաշտավայրում և Սյունիքի նախալեռներում այն կազմել է նորմայի 190-250%-ը, լեռնային շրջաններում, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ 150-200% (ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 250%, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 330%), Սյունիքի հովիտներում՝ 50-60%:

Օգոստոսի 1-4-ին, 7-12-ին, 15-ին, 20-21-ին և 28-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է անձրև և ամպրոպ:

Օգոստոսի 1-3-ին, 7-10-ին, 13-17-ին, 19-20-ին, 22-ին, 26-28-ին և 30-31-ին՝ ք.Երևանում, 1-ին, 14-ին և 19-ին՝ Աշոցք գյուղում և ք.Գյումրիում (ՀՀ Շիրակի մարզ), 7-ին՝ ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ), 14-ին և 20-ին՝ ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ), 17-ին՝ Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ), 20-ին՝ ք.Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի

մարզ) դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 8-24 մ/վրկ, պոռթկումները՝ 15-27 մ/վրկ: Օգոստոսի 1-ին ք.Ապարանում դիտվել է կարկուտ 7 մմ տրամագծով, 7-ին ք.Տաշիրում՝ 10 մմ, ք.Վանաձորում՝ 13 մմ, ք.Արթիկում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 50 մմ, Ծաղկահովիտ գյուղում՝ 25 մմ, ք.Դիլիջանում՝ 8 մմ, 8-ին ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ 8 մմ, 20-ին և 28-ին ք.Ջերմուկում, համապատասխանաբար՝ 8 և 13 մմ: Օգոստոսի 1-ին ք.Ապարանում դիտվել է ուժեղ անձրև, ինտենսիվությունը՝ 47 մմ/4 ժ, 2-ին Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 21 մմ/12 ժ, 7-ին ք.Տաշիրում՝ 30 մմ/12 ժ, ք.Իջևանում՝ 23 մմ/12 ժ, ք.Վանաձորում՝ 20 մմ/12 ժ, 20-ին ք.Ջերմուկում՝ 35 մմ/1 ժ, 21-ին Ամբերդ գյուղում՝ 49 մմ/12 ժ: Օգոստոսի 1-ին ք.Վանաձորում, 13-ին և 15-ին՝ Աշոցք գյուղում, 15-ին՝ ք.Տաշիրում դիտվել է մառախուղ 500 մ տեսանելիությամբ:

Օգոստոսին հանրապետության հյուսիսային շրջանների գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 150-180%-ը, իսկ մնացած շրջանների գետերում՝ 100-120%-ը:

Սևանա լճի մակարդակն օգոստոս ամսվա ընթացքում իջել է 1 սմ-ով և 2009թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել 1899.36 մ, որը 2008թ. նույն օրվա համեմատ բարձր է 26 սմ-ով: Օգոստոսին լճից բաց թողնված ջրի քանակը կազմել է 45.476 մլն. խոր. մ: